Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«2000 թվականի սեպտեմբերի 25-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների առանց արտոնագրերի այցելությունների մասին համաձայնագրում հայտագրերի փոխանակման ձևով փոփոխություններ կատարելու մասին» Համաձայնագրի կնքման նպատակահարմարության վերաբերյալ

2000թ. սեպտեմբերի 25-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների առանց արտոնագրերի այցելությունների մասին» Համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր) հայտագրերի փոխանակման ձևով կատարվող փոփոխությունը Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների համար նախատեսում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացու անձնագրով (ներքին անձնագիր) Հայաստանի Հանրապետության տարածք մուտքի, ելքի, գտնվելու և տեղաշարժման հնարավորություն: Նման կարգավորման անհրաժեշտությունը բխում է Միասնական տնտեսական տարածքին ՀՀ անդամակցության 2013թ. դեկտեմբերի 24-ին հաստատված «ճանապարհային քարտեզի» 236-րդ կետի պահանջից, որը նախատեսում էր ներքին շրջանառության ՀՀ և ՌԴ փաստաթղթերը համապատասխանաբար ՌԴ և ՀՀ տարածքում կիրառելու նպատակով խորհրդակցությունների անցկացում՝ ԵԱՏՄ անդամ պետությունների տարածք մյուս անդամ պետությունների քաղաքացիների փոխայցելությունների ռեժիմի դյուրացման նպատակով:

Հայտագրերի փոխանակման ձևով կատարվող փոփոխությունը ոչ միայն կդյուրացնի ՌԴ քաղաքացիների ՀՀ տարածք այցելությունների ռեժիմը, այլև կնպաստի զբոսաշրջության խթանմանը, ինչպես նաև երկու պետությունների միջև տնտեսական, առևտրային, գիտատեխնիկական, մշակութային և այլ ոլորտներում հարաբերությունների զարգացմանը:

Ելնելով վերոհիշյալից՝ «2000 թվականի սեպտեմբերի 25-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների առանց արտոնագրերի այցելությունների մասին համաձայնագրում հայտագրերի փոխանակման ձևով փոփոխություններ կատարելու մասին» Համաձայնագրի կնքումը համարում ենք նպատակահարմար:

ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԵՎԱՐԾ ՔՈՉԱՐՅԱՆ